# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 27 >> ապրիլի 2015թ. N 91

ք. Արմավիր

**2015 ԹՎԱԿԱՆԻ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ», «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ» ԵՎ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1354-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 13-ի N 04/07.2/3918-15 գրությունը.

կարգադրում եմ՝

1.Ստեղծել 2015 թվականի «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին (Գ. Սայադյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Երևան քաղաքի «N 105 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Սողոյանին (համաձայնությամբ), Արմավիրի մարզի «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Իվանյանի (համաձայնությամբ) և «Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մուրադյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Գ. Սայադյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մինչև 2015 թվականի մայիսի 22-ը և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2015 թվականի մարտի «27» -ի
N 41 կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ**

Գ. Սայադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի *կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ:*

**Անդամներ**

Ա. Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Ա. Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ:

Վ. Սուքիասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ:

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ:

Վ. Միքաելյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ